

Քիւրդը իր հին հազուատը ձգելու սովորութիւնն չունի, մինչև որ իր վրայ փափ ու ձուլիկ ձուլիկ դառնայ. միշտ նորը կը հագնի հնին վրայ, չը նայելով ամառ կամ ձմեռ եղանակներուն :

Քիւրդը այս թանձրութեամբն ալ պարթև կ'երևայ, ու հազուատի զանազան ծալքերը, կորակ կոճակների շատութիւնը, յարկ յարկ իրար վրայ դիզուած ու քիչ քիչ շողակի ցուցադրուած, անոնց գոյնզգունութիւնը իրեն աստիճանի կը թուին. չը նայած այդ կեղտի մէջ փտած չորերու առաջ բերած գարշահոտութեանը ու զգուանքին, Քիւրդը կը պարտաւորեցնէ դերձակին, որ երեխայի պէս իրեն կանգնեցնելով այդ հոտախները յարդարէ ու նորերն ալ հաճոյքով իր վրայ հագցնէ դերձակը կը կատարէ այդ դժուար պարտականութիւնը :

Բայց երբեմն ալ կը պատահին հասարակ Քրդերէ դժուարահաճներ՝ որոնք կուզեն անպատճառ իրենց հոտախները արդու կիւ տալ. այդ զգուանքի ու դժուարութիւնների առաջն աւնելու համար, շատ անգամ պատահած է երբ Քիւրդը համոզել անկարելի եղած է, դերձակը անոր պառկեցուցած է հազուատով իր դիզկեանիւն վրայ, ու կրակցած արդու կը առած ինկած է Քիւրդին վրայ զայն արդու կելու. ծաղր ու ծունակի՛ քիւրդի կրած տանջանքի վերջանալէն յետոյ, Քիւրդը ուրախութեամբ ու խնդալով վեր կացեր է, քանի որ իր համոզմամբ յաջողեր է դերձակին ինքզինք արդու կել տալ, արդու կէն առաց ու է վնաս մը կրելու :

Քիւրդի կերը.— Նա շատ սակաւապէտ է և թէ չուայլ շատակեր. չունեցած պարագային կը կրծէ չոր հաց ու կը խմէ պարզ ջուր. եթէ ցորենէ հաց չունենայ, կուտէ գարիէ, կորեկէ, պաճեկէ պատրաստուած հացեր. ունեցած ժամանակ՝ իւղ, կարագ, մածուն, պանիր, ձու, ձուազեղ. ոգելից բմպելիներէ կը զգուի. ասոնք իր բնականաւոր սովորութիւններն են. իսկ երբ դրամը գրպանն քաղաք մանայ, շատ կը սիրէ քաղաքացու կերը, կերթայ քիւրդերուն յատկացուած ճաշա-